

AZG Armenian Daily #192, 25/10/2005

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՎԵՐԱՊԱՅՈՒԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

ՎԱԶԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ

Այս տարուան հոկտեմբեր ամսուան կը զուգահիսի Մոնրեալի Ապագայ եւ Բուենոս Այրեսի Սարդարապատ շաբաթաթերթերու երեսունամեակները: Օրերս ողջունեցինք նաեւ Բեյրութի Չարթօնք օրաթերթի 68-րդ տարեդարձը: Իսկ հոկտեմբեր 22-ին կը լրանայ Լոս Անջելեսի Նոր Օր շաբաթաթերթի հրատարակութեան 83-րդ տարին:

Չորս թերթերն ալ ծնունդ առած են հոկտեմբերին: Սխալ չհասկցուիք. Մշակոյթի ամիսին հետ առնչութիւն թող չտեսնուի հոկտեմբերի ծնունդներուն մէջ:

1922, 1937 եւ 1975. երեք տարբեր թուականներ, որոնք բարեբեր եղան ու հարստացուցին սփիւռքահայ մամուլը:

Նախքան յիշեալ թերթերուն անդրադառնալը, տեղին է ըսել, որ Ռամկավար Ազատական Կուսակցութեան 1921 հոկտեմբերի 1-ին կազմաւորումէն ի վեր հայատառ մամուլը բարգաւաճած է ռամկավար ազատականներու անօրինակ աշխատունակութեամբ: Չորս թերթերուն վրայ պիտի աւելցնենք 1915-ին սկսուած Կահիրէի ,Արեւը՝ Նախ որպէս երկօրեայ, ապա՝ օրաթերթ, որ 1922-էն ի վեր մինչեւ այսօր Եգիպտոսի գաղութին՝ հոգ չէ թէ նօսրացած, կը ծառայէ որպէս կուսակցութեան պաշտօնաթերթ: Բոսթընի The Armenian Mirror Spectator-ը 1932-ին սկսաւ հրատարակուիլ անգլերէնով եւ կը շարունակուի մինչեւ այսօր: Այս թերթին հարեւանը՝ ,Պայքար-ը, գրեթէ դար մը ծառայելէ ետք ԱՄՆ-ի Արեւելեան ափի հայախօս զանգուածին, 90-ական թուականներուն դադրեցաւ շաբաթաթերթի հերթականութեամբ լոյս տեսնելէ, փոխադրուեցաւ Երեւան, ուր մահացաւ: Յունաստանի մէջ 1957-էն մինչեւ 1968 լոյս տեսած էր ,Երկիր անունով շաբաթաթերթը, որ վերածուեցաւ ,Նոր Աշխարհ-ի ու կը հրատարակուի մինչեւ այսօր, յունարէնի յաւելուածով մը: Արժանթինայի մէջ 1975-ին ծնունդ առաւ ամբողջութեամբ հայատառ ,Սարդարապատ-ը, այսօր՝ մեծ մասով իսպանատառ դարձած է շաբաթաթերթը: Ռամկավար

ազատական մամուլին կրտսեր անդամն է Ֆրանսայի La Lettre de l'ADL, որ ամսական հերթականությամբ Փարիզեն կը սփռուի ինտերնետով՝ Ֆրանսացի եւ ֆրանսահայ ընթերցողներուն: Երուսաղեմի մէջ կը հրատարակուի ՀԵՄ անունով եռամսեայ մը, որ Իսրայէլի ու Յորդանանի հայ ընթերցողներու ստուար զանգուածին կը ծառայէ, աշխարհը՝ սաղիմահայութեան կապելով:

30, 73 եւ 83 տարեկան չորս թերթերը գրեթէ նոյն դժուար սկզբնական տարիները ապրած են: Նիւթական անապահովութիւն, տատանող ընթերցողական լսարան: Բայց Սփիւռքի կարիքներուն հասնելու առաքելութիւնը, գաղութներուն ներքին կարգ ու սարքը ծրագրուած տեսնելու առաջադրանքը, ժողովրդավար աւանդութիւնը հայ հաւաքականութիւններուն մէջ հաստատուած տեսնելու նպատակը, հայրենասիրութեան վերացական ուժին ամրապնդումը հայ զանգուածներուն մօտ վերածուած են վերապրումի բնագոյի: Ահաւասիկ 2005 թուականին կատարուած յետադարձ ակնարկին անմիջական գնահատականը՝ Ռամկավար Ազատական մամուլին:

,Չարթօնք-ը եւ ,Նոր Օր-ը ծանրագոյն տարիներուն իսկ կարելի եղաւ լոյս ընծայել: ,Չարթօնք-ը վերապրեցաւ համաշխարհային երկրորդ պատերազմին տեղական մասը. թերթը ապրեցաւ նաեւ լիբանանեան քաղաքացիական ծանր պատերազմները: Իսկ վերջին քառորդ դարուն լիբանանեան հայ մամուլին հետ, ,Չարթօնք փոքրացած եւ հիւժած հայ համայնքին կը ծառայէ: Ատենին չորս օրաթերթ կարդացող հայ գաղութին մօտ երկու օրաթերթ մնացած է՝ ,Ազդակը եւ ,Չարթօնքը, ու քանի մը շաբաթաթերթեր: Գոյութեան հերոսական պայքար մըն է տարուածը Լիբանանի մէջ՝ յանուն հայ մամուլին: Նոր Օր-ը դիմագրաւեց համաշխարհային երկրորդ պատերազմին ստեղծած տնտեսական ծանր պայմանները եւ Յուրտ պատերազմով ծնունդ առած Մըք Քարթիիզմին արհաւիրքը:

Սփիւռքահայ հերթական պայքարը կը յայտնուի Յունաստանի եւ Արժանթինայի մէջ նաեւ: Աթենքի Նոր Աշխարհ-ը իր էջերը բազմացնելով, յունարէնի ծաւալուն բաժին ստեղծեց:

Ինչո՞ւ: Պարզ է պատասխանը: Հայերէն ընթերցողներու թիւին զգալի նուազումը եւ նոր սերունդին մօտ յունախօսութեան տարածումը: Յունախօս զանգուածը պիտի ապրեցնէ՞ հազար զոհողութեամբ հրատարակուող արժեքաւոր այս շաբաթաթերթը:

Նոյն ախտաճանաչումը պիտի կատարուի Բուենոս Այրեսի Սարդարապատ-ին համար: Իսպաներենի մեծ բաժինին մօտ, փոքր ծաւալով հայերենի բաժինով կը հրատարակուի Սարդարապատը: Արժանթինայի եւ Բրազիլի գաղութներուն տկարացած հայախօսութիւնը կը թելադրէ տխուր այս վիճակը: Թերեւս ուշ չ'է այն օրը, երբ Սարդարապատ-ին մէկ մասը պորթուգալերէնով լոյս տեսնէ... գոհացնելու համար Սաօ Փաուլոյի երիտասարդ ընթերցողները:

Եւ վերջապէս հասնելով արեւմտեան ամերիկահայ գաղութը պիտի ըսենք, որ հսկայ այս գաղութին կը ծառայեն երեք օրաթերթ՝ Ասպարէզ, Նոր Հայաստան եւ Ժամանակ, չորս շաբաթաթերթ՝ Մասիս, Հայ Կեանք, Նոր Կեանք եւ Նոր Օր, քանի մը շաբաթաթերթանման արեւելահայ ուղղագրութեամբ թերթեր եւ ամսաթերթեր: Բազմութիւն մըն է, որ թէ՛ յուսալի կը դարձնէ մեր գաղութին անմիջական ապագան, բայց նոյն ատեն մտահոգիչ: Յուսալի, որովհետեւ բազմաթիւ հրատարակութիւնները հայերէնով ընթերցանութիւնը կ'երկարածգեն որոշ ատեն մը եւս... Մտահոգիչ՝ որովհետեւ տնտեսական սեղմումները, արեւմտահայ լեզուով ընթերցող խումբին տակաւ նուազումը եւ կամաւոր աշխատակիցներու տարիքային յառաջացումը՝ առանց նոր սերունդի պատրաստութեան, փայլուն ապագայ չ'են խոստանար այսօրուան մամուլի ղեկավարներուն:

Հակառակ դիմագրաւելի դժուարութիւններուն, ռամկավար ազատական մամուլը օժտուած է գործօն եւ աշխոյժ Կեդրոնական մամուլոյ դիւանով մը, գլխաւորութեան Յակոբ Վարդիվառեանի, որուն առաքելութիւնն է Սփիւռքի, Հայաստանի եւ Մայր աթոռի կարեւոր լուրերուն մէկտեղումն ու սփռումը կուսակցական եօթ թերթերուն եւ Երեւանի Ազգ-ին: Էական կապի առկայութեան, մամուլի առաքելութիւնը անելի յստակացած է անմիջական ապագային մէջ:

Նոր դարը թեւակոխած Ռամկավար ազատական մամուլը պարտաւոր է սակայն նոր Սփիւռքին ծառայելու առաջադրանքներ եւ գործադրելի ծրագիրներ մշակել: Օրինակ, ազգային բնոյթով Երրորդ հանրապետության ներկայութեան, Սփիւռքին հայրենասիրութիւն ջամբելու գործը, որքան ալ անհրաժեշտ, բայց շա՛տ տարբեր է Խորհրդային Հայաստանի տասնամեակներու կեանքին ընթացքին կատարուածէն: Մամուլը ի՞նչ ուղիներով պիտի սատարէ ազգանուէր այդ գործին:

Նոր Եւրոպայի մէջ ծնունդ առած են նոր գաղութներ, որոնց աւիւն տալու, լրատուութեան նոր ճամբաներ բանալու, հին Սփիւռքին հետ առնչելու ծանր

Եւ անձանօթ պարտականութիւնը որքանօ՞վ պիտի կարենայ ստանձնել ռամկավար ազատական մամուլը:

Ինտերնետային լրատուութեան տարածումը ինչպէ՞ս պիտի դիմագրաւէ մեր մամուլը: Այսօր, անգլերէնով կատարուած ծաւալուն սփռումը լուրերուն, վաղը ինչի՞ պիտի վերածուի արդեօք: Ինչպիսի՞ վտանգի: Այսօրուան ձեւով մատուցումը լուրերուն եւ աշխատակցութիւններուն պիտի դիմանա՞յ մէկ կամ երկու տասնամեակ մը ետք...

Դեռ աւելին կայ, ամենէն դժնդակը: Պիտի ընդունինք, որ հայերէն լեզուն տեղատուութիւն կ'ապրի Սփիւռքի մէջ: Եթէ մերձաւորարեւելեան հայ վարժարանները քիչ թէ շատ հայերէնի ընթերցող կը հասցնեն արաբախօս հսկայ փաղանգին կողքին, արեւմտեան կողմն աշխարհի մէջ տասնհինգ հայ վարժարանները այդ պերճանքը պիտի չընտրեն վաղուան գաղութներուն: Ուրեմն, մեր հայատառ մամուլը ո՞ր պիտի ուղղուի. դէպի բնական մա՞հ, թէ տարբեր լեզուի որդեգրում:

Տրամաբանական հարցեր են ասոնք, որոնց արծարծումը եւ լուծումներու որոնումը յաճախ կը նկատուի անձնատուութիւն:

Մերձաւորարեւելեան նօսրացող համայնքներուն մէջ համեստ պայմաններով առնուած ճակատագրական ձեռնարկ մըն է ,Չարթօնք օրաթերթին ամսական արաբերէնի յաւելուածին հրատարակութիւնը՝ արդէն տարիէ մը ի վեր: Կահիրէի Արեւ-ը քանի մը տարիէ ի վեր արաբ խմբագիրով արաբերէն յաւելուած մը կը հրատարակէ արդէն: Գալիք արաբախօսութեան դեղատո՞մս մըն է կատարուածը, թէ՞ տեղական փորձարկութիւններ: Այս յաւելուածներուն հրատարակութիւնը մեր մամուլին առաքելութեան մասին բան մը կը վկայէ. արդեօ՞ք ժամանակէն առաջ առնուած որոշումներ կը հետապնդենք, թէ՞ ճակատագրուածը դիմակայել սկսած է ռամկավար ազատական քաղաքական միտքը, ինչպէս պատահեր էր 1930 թուականին Մ. Նահանգներու Արեւելեան ափին վրայ: Բոստընի մէջ, երբ կուսակցութիւնը կ'որոշէր անգլիատառ The Armenian Mirror թերթը հաստատել 1930-ին, ահաւոր հակազդեցութեամբ մը գաղութին զանազան տարրերը կ'ընդվզէին ռամկավարներուն դէմ՝ զանոնք ամբաստանելով հայ թերթին անձնատուութիւնը ընդունած ըլլալու մեղքով: The Mirror թերթը միանալով Spectator-ին, մինչեւ այսօր կը շարունակուի հրատարակութիւնը անգլիատառ տոկուն այդ թերթին, որ կը ծառայէ տակաւ ընդարձակուող անգլիախօս համայնքի մը:

Յարցումը կը կրկնենք. Լիբանանի եւ Եգիպտոսի մէջ կատարուած փոքր փորձերը արդեօ՞ք գալիքին նախադուռն է. արդեօ՞ք Յունաստանի, Արժանթինայի մէջ նոյն հերթափոխը պիտի պարտադրէ ինքզինք:

Յպարտառիթ տարեդարձերու սեմին մտահոգիչ չէ՞ ընդհանրապէս հայատառ մամուլին վիճակուած ճակատագիրը. նաեւ՝ Ռամկավար ազատական մամուլինը:

Խմբ. կողմից.- Վաչե Սեմերջյանը սփյուռքահայ մեր լավագոյն խմբագիրներից է, նաեւ փնտրված հրապարակագիր, որի համահայկական բնույթի հոդվածները հաճախ են հյուրընկալվել Ազգ-ի էջերում: Արդեն 5-6 տարի նա առանց նյութական վարձատրության խմբագրում է ՌԱԿ լավագոյն պաշտոնաթերթերից մեկը՝ Լոս Անջելեսի Լոր օր շաբաթաթերթը, որի շուրջը համախմբվել են այդ գաղութի լավագոյն մտավորականներից շատերը, թերթը դարձնելով ամերիկահայ ամենալուրջ ամբիոնը եւ ժամադրավայրը միանգամայն:

Սակայն, մինչ սփյուռքահայ մամուլի ապագայով մտահոգ վերելի հոդվածը լույս կտեսներ մեր թերթում, ՌԱԿ տեղի ղեկավարների որոշմամբ Վ. Սեմերջյանին ազատել են իր պաշտոնից, տեղը նշանակելով դեռեւս մեզ անհայտ անձի: Ով էլ որ լինի այդ անձը, ինչ արժանիքներ էլ որ ունենա, շտապենք ասել, որ հարցականի տակ է դրվելու նույնիսկ նրա հետագա հեղինակությունը: Ոչ ոք իրավունք չունի այսպես վարվելու մտավորականի, խմբագրի հետ, նրան սատարող մտավորական շրջանակի եւ առաջին հերթին՝ ընթերցողի հետ: Թերթերը, նույնիսկ կուսակցական պաշտոնաթերթերը, կուսակցական գրասենյակի նման չեն, երբ կարելի է ըստ կամս փոխել այս կամ այն պաշտոնյային: Թերթն առաջին հերթին հասարակության հետ աշխատող մեխանիզմ է, հետեւաբար հասարակության կարծիքը նման դեպքերում առաջնային է:

Թերեւս ոմանք առարկեն, որ խմբագիրներն էլ կարող են սխալներ գործել, երբեմն չգտնվել ակնկալված բարձրության վրա: Ճիշտ է: **Սակայն այս դեպքում, որքան մեզ հայտնի է, խմբագրի մեղքը եղել է թերթի էջերում տեղ տալ նաեւ այնպիսի հոդվածների, որոնք քննադատում են ՀԲԸՄիության ղեկավարությանը Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունը փակելու որոշման համար: Տպավորությունն այն է, որ խմբագրի փոփոխման որոշման վրա ներագդել է ՀԲԸՄ-ի ղեկավարությունը:**

Վերջում ավելացնենք, որ Վ. Սեներջյանը, որքան գիտենք իրեն, կարծում ենք այնքան էլ դժգոհ չպիտի լինի կատարվածից. թերթ հրատարակելու հոգսերից ու տաղտուկից մի քիչ գերծ կմնա....: